պետք է բռնագանձել 400.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-9-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով, Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Իվաֆարմ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության «Վ.Ա Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 13.11.2024 թվականի թիվ 1196 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել.

անվավեր ճանաչել «Իվաֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲ ընկերության տնօրեն Նարեկ Մանուկյանի 13 նոյեմբերի 2024թ № 1196 որոշումը:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Ա. Սաֆարյան) 21.01.2025 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնել:

3. ՀՀ առողջապահության նախարարության «Վ.Ա Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ից հօգուտ «Իվաֆարմ» ՍՊԸ-ի բռնագանձել 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

ՀՀ առողջապահության նախարարության «Վ.Ա Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ից հօգուտ «Իվաֆարմ» ՍՊԸ-ի բռնագանձել 400.000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE2E-52D9-4DDA-AD06 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am